

ԲԱՐԵԿԱՄ

Ճշմարիտ բարեկամութեան նշաններէն մէկն է ընկերոջ գաղտնիքները սրտի գաղտնարանին մէջ պահել եւ օտարներուն չմատնել, որովհետեւ բարեկամութեան հիմքը հաստատուն է ըլլար: Ըշմարիտ բարեկամ չէ ան՝ որ իր բարեկամին հետ գփտուելով՝ հաւատարմութեան կնիքը կը խափանէ եւ ընկերոջ գաղտնիքները կը հրապարակէ:

Ճշմարիտ բարեկամը նման է հայելիի, կշիռքի եւ փորձաքարի: Ինչպէս որ հայելիին մէջ մէկը կը տեսնէ իր դէմքի վայելչութիւնը կամ արատը, կշիռքով կ'իմանայ իրի ծանրութեան չափը եւ փորձաքարով՝ ոսկիի մաքրութեան աստիճանն ու արժողութիւնը, այդպէս եւ բարեկամի ազդարարութեամբ մէկը կարող է լաւ հասկնալ, թէ առանձնութեան մէջ իր մտածածը վայելուչ, կատարեալ ու պատշաճաւոր է ըստ ժամանակի, տեղի եւ ըստ այլ բոլոր պարագաներուն: Քանզի մարդ բազում անգամ, թէկուզ եւ իմաստուն ըլլայ, առանձին առանց խորհրդակցիցի, սխալներ կը գործէ կամ գանազան բաներու մէջ կը տարակուսի կամ խորածը անորոշ ու անգործածելի կը ձգէ: Անոր համար ալ մէկ ուրիշի կարիքը ունի, որպէսզի ան սխալները ուղղէ, տարակուսանքները փարատէ եւ մտածուածը եթէ հարկաւոր ու օգտակար է, խրախուսելի գործ դնել: Ուստի ով որ անկեղծ եւ իմաստուն բարեկամ ունի՝ չի սխալիր, քանզի երկու աչքը աւելի լաւ կը տեսնէ քան մէկը:

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐՈՒ, ԴԵԻԵՐՈՒ, ՉԱՐ ՈՒԺԵՐՈՒ՝ ՀՈԳԵՒՈՐ ԴԻՏԱՆԿԻՆԵՆ

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ


Աստուծոյ խօսքը կարդալով ու խորանալով՝ կը հասկնանք, թէ որքան տհաճ է խաւար ուժերու աշխարհը, եւ որքան տարածուած է այդ մեղքը: Յաւով պիտի ընդունինք, որ այսօր ալ այս հարցին մէջ դեռ շատ մշուշոտ կողմեր կան:

ԳՈՐԾՆՈՒԿՆԵՐՈՒ «ԲՈՒԺՈՒՄ»

Շատ յաճախ կը տեսնենք, որ հրմայողները կ'օգնեն որ մարդիկ ազատին գորտնուկներէն: Քանի մը օրինակներ տանք, թէ աշխարհի գանազան կողմերուն ինչպէս կը կատարուի անիկա:

Տարմշխատիքէն ստացուած նամակի մը մէջ ըսուած է. «Երբ դեռ 11-12 տարեկան դպրոցական էի, ձախ ձեռքիս շատ գորտնուկներ ունէի: Ամէն ձեռով կը փորձէի գանոնք վերցընել, բայց չէի յաջողեր: Այն ատեն ինծի խորհուրդ տուին, որ պառակտ մը դիմեմ: Գացի անոր մօտ եւ անմիջապէս թել մը առաւ, օղակներ շինեց, անհասկնալի բաներ մը շնչաց եւ ճրղակները անցուց բոլոր գորտնուկներուն վրայ: Յետոյ ըսաւ, որ ոեւէ մէկուն թաղման ժամանակ այդ թելը գերեզմանին մէջ պիտի նետէ, եւ ես կ'ազատիմ: Այդպէս եղաւ: Գորտնուկները անհետացան»

Որքա՛ն քիչ են անոնք, որ կը հասկնան՝ թէ ի՞նչ կը նշանակէ ատով հրապուրուիլ... Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 11 ՄԱՌՏ, 2012 ԹԻՒ 11

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 16.1-9

Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ՏՆՏԵՍԻ
Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.-

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով՝ թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուններէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դո՞ւն որքան պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա ըսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը չահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

Ս. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Յովհանն Օձնեցի հայ եկեղեցւոյ փառքերէն մէկն է: Ան կաթողիկոսական աթոռ կը բարձրանայ (717-728) յաջորդելով Եղիա Արճիշեցի կաթողիկոսին:

Ս. Յովհանն Տաշիրք գաւառի Օձուն գիւղէն է եւ աշակերտը՝ Թէոդորոս Քոթենաւորին, որ իր ժամանակի ամէնէն նշանաւոր աստուածաբաններէն եղած է: Կ'ենթադրուի թէ ան հելլենական ուսումնարանի մը մէջ կրթուած էր: Իբրեւ իմաստուն հովուապետ, իր կաթողիկոսութեան տարիներուն ընթացքին հեռու կը մնայ յունաստի միտումներէ, թէ՛ վարդապետական մարզին մէջ եւ թէ՛ քաղաքական ուղղութեան վրայ: Ան իր շնորհները լաւագոյնս կ'օգտագործէ իր պաշտօնին բովանդակ տեւողութեան ընթացքին եւ երկրին քաղաքական պատեհութենէն օգտուելով՝ ազգային եկեղեցւոյ կազմակերպութիւնը հաստատուն հիմերու վրայ կը դնէ: Իր այդ քաղաքականութեան առաջին պատուը կ'ըլլայ Էօմէր ամիրայետէն խնդրել, որ քրիստոնեաները չբռնադատուին իրենց հաւատքը փոխելու, եկեղեցիներէն հարկ չպահանջուի եւ քրիստոնէական պաշտամունքը ամէն տեղ ազատօրէն կատարուի:

Իր հայրապետութեան երկրորդ տարին, Դուլինի մէջ կը գումարէ եկեղեցական ժողով մը, որուն ներկայ կը գտնուին աւելի քան 30 եպիսկոպոսներ:

Ժողովի ընթացքին կը խօսի իր նշանաւոր ատենաբանութիւնը, որ կը սկսի «Համբերողացն նախատիպ մեծն Յովք» բառերով:

Այս ժողովին կը սահմանուին երեսուներեք կանոններ: Բացի այս կանոններէն, Օձնեցի Հայրապետ եկեղեցական կանոններ կը հաւաքէ եւ կը կազմէ առաջին հայ կանոնագիրքը, որ ժամանակի ընթացքին հետզհետէ կը կատարելագործուի: Ս. Յովհանն Օձնեցի կը յատկանշուի աղանդաւորներու դէմ իր մղած պայքարով եւ այս տեսակէտով յաւելտ պիտի մնան իր «Ընդդէմ երեւութականաց» եւ «Ընդդէմ Պաւղիկեանց» ճառերը: Ան նաեւ ժամագիրքի կարգաւորիչներէն մէկը եղած է, գրելով «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գիրքը, «Աւագ Ուրբաթ»ի շարականները, «Մեղաք յամենայնիս»ն եւ ուրիշ գործեր:

Ս. Յովհանն Օձնեցի իր կեանքի վերջին հանգրուանին Սոթեր լեռան վրայ իր կառուցած եկեղեցւոյ մէջ ճգնական կեանքի կը նուիրուի «պահօք, աղօթիւք եւ տքնութեամբ» եւ «խաչաչարչար ճգնութեամբ», իրեն ընկերակից ունենալով Գէորգ Սքանչելագործ եւ Մատթէոս Խոտաճարակ վարդապետները:

Ս. Յովհանն Օձնեցի Հայրապետ կը վախճանի 728-ին: Անոր բարձր իմաստութեան եւ սրբութեան համբաւը միշտ վառ կը մնայ յաջորդ սերունդներու սրտին մէջ:

Պահքը միայն կերակուր ուտել չուտելը չէ, այլ՝ մեղքերու խափանումն է: Պահք է սակաւախօսութիւնը, անընչասիրութիւնը: Պահք են աչքերը պարկեշտացնելը՝ անամօթ նայուածքներէ, ապառքները՝ անպատկառ խօսքերէ, սիրտը՝ պիղծ խորհուրդներէ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Փոքր ստաիճանները գործնականապէս կա՛ն մեր Եկեղեցւոյ մէջ հիմա:

Այո՛: Ձեռնադրութեան Մաշտոցի մէջ կան անոնք եւ քահանայութեան կոչուողը՝ ձեռնադրութեամբ կը ստանայ վեց աստիճանները եւ յետոյ՝ քահանայութեանը:

Բայց մեր Եկեղեցւոյ գործնական կեանքին մէջ, փոքր աստիճաններէն չորսը կը կոչուին ԴՊՐՈՒԹԻՒՆ. եւ դպիրներ, ձեռնադրուած ըլլան կամ ոչ, շապիկ կը հագնին, ի պահանջել հարկին կիսասարկաւազի պաշտօն կը կատարեն, կ'երգեն շարականները եւ մասնաւորապէս սուրբ Պատարագի երգերը: Ընդհանրապէս դպիրները ձեռնադրուած կ'ըլլան եւ մեծ եկեղեցիներու մէջ իրենց յատուկ կազմակերպութիւնն ալ ունին Դպրաց դաս անունով:

Միւս կողմէ ժամկոչներ եւ լուսարարներ կան եկեղեցւոյ մէջ, որոնք ընդհանրապէս չունին փոքր աստիճաններ կը բռնեն դոնապանի եւ ջախընկալի տեղը:

Կան նաեւ, ցանցառ կերպով անշուշտ, ուրարակիրներ, փոխանակ կէս եւ աւագ սարկաւազներու, որոնք եպիսկոպոսին հրամանով միայն կոչուած են սպասաւորութեան եւ կը կատարեն սարկաւազութեան պաշտօնը, բացի վերաբերումէն:

Կիսասարկաւազութիւնը չկայ գործնականապէս, իսկ աւագ սարկաւազութիւնը, ընդհանրապէս, մեծ եկեղեցիներու կամ վանքերու մէջ պահուած կը մընայ այլեւս...

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՂՕԹՔ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ

Կենդանի Աստուծոյ Որդի, օրհնեալ՝ ամէն բանի մէջ, դուն՝ հաւաւոր Հօրը անքննելի ծնունդ: Քեզի համար անկարելի բան չկայ:

Երբ քու փառաւոր ներկայութեանդ անստուեր նշոյլները ծագին՝ մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, շղթաները կը փշրուին, մահացածները նոր ծնունդով կը կենդանանան. հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան. ապականութիւնը կը վերնայ, տիրութիւնը տեղի կու տայ, հեծութիւնը կը նահանջէ, խաւարը կը փախչի, մշուշը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ, մռայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մութը կը վերանայ, գիշերը կը մեկնի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը չքանան, յուսահատութիւնը կը հալածուի, եւ քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, Ո՛վ քաւիչ բոլորին:

Դուն, որ չեկա՛ր մարդոց հոգիները կորսնցնելու, այլ՝ փրկելու, քու անսահման ներողամտութեամբդ ներէ՛ իմ անթիւ չարիքներս, որովհետեւ միայն դո՛ւն ես՝ երկինքի մէջ անճառելի եւ երկրի վրայ անքննելի, որ ներկայ ես՝ գոյութիւն ունեցող իւրաքանչիւր տարրի մէջ եւ աշխարհի բոլոր կողմերը, դուն՝ ամէն բանի սկիզբը, ամէն բանի մէջ ներկայ, որ կատարելապէս կ'օրհնաբանուիս բարձրունքներուն մէջ: Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին՝ փա՛ռք Քեզի՛ յաւիտեան: Ամէն:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ

56.1- -57.21

Տէրը այսպէս կ'ըսէ. «Իրաւունքը յարգեցէ՛ք եւ արդարութիւն ըրէ՛ք, որովհետեւ տես մօտեցաւ ժամանակը երբ պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը երբ պիտի ողորմիմ ձեզի»:

Երանի այն մարդուն որ արդարութիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ Շարաքներս կը պահէ եւ չի պղծեր զանոնք, եւ կը դադրի անիրաւութիւն գործելէ»:

Տիրոջ հաւատացած ռելէ օտարագգի թող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժողովուրդին մէջ պիտի չընդունի», եւ ռելէ ներքինի թող չմտածէ, ըսելով. «Ես անպտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդունիր»:

Տէրը այսպէս կ'ըսէ. «Այն ներքինիները որոնք իմ Շարաքներս կը պահեն, կ'ընտրեն այն բաները գոր ես կ'ուզեմ եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան իմ որդիներուս եւ դուստրերուս. անոնց պիտի տամ յաւիտենական պատիւ մը որ բնաւ պիտի չջնջուի»:

Իսկ այն օտարագգիները որոնք ինծի հաւատացին ինծի ծառայելու համար, եւ իմ անունս սիրեցին՝ ինծի ծառայ եւ ադախին ըլլալու համար, եւ բոլոր անոնք՝ որոնք իմ Շարաքներս կը պահեն եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռս պիտի տանիմ եւ գիրենք պիտի ուրախացնեմ իմ աղօթքի տանս մէջ. պիտի ընդունիմ իմ Անդանիս վրայ իրենց մատուցած ողջակէզներն ու զոհերը, որովհետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:

Շարունակիլ եւ ամբողջացնել Աստուածաշունչէն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՓԵՍՍՈՑԻՆԵՐՈՒՆ

4.17- -5.14

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի. չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյս չունին, իրենք գիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի թէ այդ չէ՛ Քրիստոսի նամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք թէ Յիսուսի մէջ է նշմարութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապակաւած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եւ եղէ՛ք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած. եւ ապրեցէ՛ք նշմարիտ կեանքը, արդարութեամբ ու սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէն հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ նշմարութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսագուն կ'ըսէ. «Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէ՛ք». եւ բարկացած չմնաք միևնչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք Սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր թող այլեւս չգողնայ, այլ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու՝ օգնելով անոնց որոնք կարօտ են: